ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.17. Հյուսիսային Եվրոպայի տնտեսությունը

• • •

հենվում է սեփական ռեսուրսների, հատկապես լեռնային գետերի ջրաէներգետիկ պաշարների, ինչպես նաև ներմուծվող նավթի և մազութի, բալթյան պետություններում՝ մասամբ տորֆի, Էստոնիայում՝ նաև այրվող թերթաքարերի բազայի վրա (Կոխտլա Յարվե), իսկ Դանիան վառելիքն ամբողջությամբ ներմուծում է: Բացառություն են կազմում Նորվեգիան և Մեծ Բրիտանիան, որոնք Հյուսիսային ծովի շելֆից նավթ են արդյունահանում:

Սեփական և ներկրովի ուրանի հումքի վրա զարգանում է ատոմային էներգետիկան՝ Մեծ Բրիտանիա,Շվեդիա, Ֆինլանդիա: Բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվող էլեկտրաէներգիայով՝ 32 հզ.կվտ/ժ, Նորվեգիան աշխարհում առաջին տեղում է, Իսլանդիան և Շվեդիան՝ համապատասխանաբար երրորդ և չորրորդ տեղերում: Բոլոր երկրներում էլ շատ բարձր է արտադրության և կենցաղի էլեկտրիֆիկացման մակարդակը:

• • •

Երկաթուղային տրանսպորտը մեծ դեր է խաղում ընդարձակ տարածք ունեցող Շվեդիայի, Ֆինլանդիայի, Մեծ Բրիտանիայի, Նորվեգիայի ներքին փոխադրումներում: Արագ զարգացող ***ավտոմոբիլային տրանսպորտն*** աստիճանաբար իշխող դիրք է գրավում երկաթուղայինի նկատմամբ: Միջազգային օդային հաղորդակցության մեջ մեծ դեր են խաղում սկանդինավյան և բրիտանական օդային ընկերությունները:

• • •

Արդյունաբերությունը: Հյուսիսային Եվրոպայի երկրներում տիրապետում է վերամշակող արդյունաբերությունը՝ էլեկտրաէներգետիկա, հանքային հումքի վերամշակում (Շվեդիա), անտառանյութի մթերում (բացառությամբ Դանիայի և Իսլանդիայի): Արդյունաբերությունը կենտրոնացած է

առավելապես նավահանգստային քաղաքներում, Մեծ Բրիտանիայում՝ նաև ներքին շրջաններում:

• • •

Տարածաշրջանի բոլոր երկրներում, բացի Իսլանդիայից, արդյունաբերության կառուցվածքում առաջատարը ***մեքենաշինությունն*** է, որն առանձնանում է ամենից առաջ խոշոր նավաշինությամբ՝ Շվեդիա, Մեծ Բրիտանիա, Դանիա: Ծովային խոշոր նավերի արտադրությամբ (տարեկան՝ 325) Շվեդիան զիջում է միայն Ճապոնիային (350), իսկ երրորդ տեղում Հարավային Կորեան է: Ամբողջ աշխարհում հայտնի են շվեդական բարձրորակ շինարարական մեքենաները, ծովային նավերը, ավտոմոբիլները, էլեկտրաքարշերը, երկաթուղային վագոնները, բարդ և ճշգրիտ սարքերը:

• • •

Դարեր ի վեր, կախված բնակլիմայական պայմաններից, բուսաբուծությունը հարմարեցվել է ոչ միայն բնակչությանը պարենով ապահովելուն, այլև՝ անասնապահության պահանջներին: Գյուղատնտեսական արտադրության մեջ բացարձակ գերակշռություն ունի ***անասնապահությունը***, որն աչքի է ընկնում բարձր մթերատվությամբ ու ապրանքայնությամբ:

Դա ամենից առաջ վերաբերում է Դանիային, որն աշխարհում կաթի (մեկ շնչին՝ տարեկան 1 տ), յուղի, պանրի, խոզի և թռչնամսի, ձվի խոշորագույն արտադրող և արտահանողներից է: Մեկ շնչին բաժին ընկնող կենդանական յուղի արտադրությամբ Ֆինլանդիան, Նիդեռլանդները կիսում են առաջին-երկրորդ տեղերն աշխարհում:

• • •

Տնտեսապես ակտիվ բնակչության 70–80%-ը զբաղված է ծառայությունների ոլորտում: Չնայած տարածաշրջանում ապրում է աշխարհի բնակչության մոտ 1,3%-ը, սակայն այն մատակարարում է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 5%-ը: Նրան բաժին է ընկնում ծովային առևտրական նավատորմի 16 և արտաքին առևտրի 8%-ը:

• • •

Բուսաբուծությունն աչքի է ընկնում հացահատիկի, շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի, բանջարեղենի և կերային մշակաբույսերի աճեցմամբ՝

ապահովելով բարձր բերք: Ցանքատարածությունների 3/4-ը օգտագործվում է կերային մշակաբույսերի և ցանովի խոտերի աճեցման համար: Բուսաբուծությունը գրեթե ամբողջությամբ «աշխատում է» անասնապահության համար: **Բացատրե՛ք այդ երևույթը:**

• • •

Այն իրականացվում է նաև լաստանավերի (պարոմ) միջոցով (աշխարհում ամենազարգա-ցածը): Բոլոր երկրների համար, բացառությամբ Լիտվայի և Լատվիայի, գլխավորը ***ծովային տրանսպորտն*** է: Նորվեգիան հայտնի է որպես «համաշխարհային փոխադրող» կամ «ծովային կառապան»: Բոլոր խոշոր նավահանգիստները Հյուսիսային և Բալթիկ ծովերի ափերին են: Դրանք աշխարհի ամենախիտ երթևեկություն ունեցող ծովերից են: